

1874



**ԾՐԱԳԻՐ - ԿԱՆՈՆԱԳԻՐ  
ԱՄԵՐԻԿԱՅԻ  
ՀԱՅ ԿԱՐՄԻՐ ԽԱԶԻ**

Ե Ի

**DAUGHTERS OF ARMENIA, INC.**

Հ Ա Տ Ո Ի Ա Ծ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԽԱԶԻ**

ՏՊԱՐԱՆ «ՊԱՅԻՄՐ»Ի

Պ Ո Ս Տ Ո Ն

1924

614.88

7-24

614.88

2-24

49

12 002



ԾՐԱԳԻՐ — ԿԱՆՈՆԱԳԻՐ

ԱՄԵՐԻԿԱՅԻ

ՀԱՅ ԿԱՐՄԻՐ ԽԱԶԻ

Ե Ի

DAUGHTERS OF ARMENIA, INC.

ՀԱՏՈՒԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԽԱԶԻ

ԱՆՈՒՆ

1. — Ընկերությունն է Հայ կարմիր հաշ. Անդրիերէն անունն է. Daughters of Armenia, Inc., որ վաւերացուած է Ամերիկեան պատկան իշխանութիւններէն, Հայաստանի Պետական կարմիր Սաճի Գլխաւոր Վարչութեանն եւ անոր Պօլսոյ լիազօրէն (\*):

(\*) Համաշխարհային պատերազմի միջոցին, մեծ պետութեանց կ. հաշի Ընկերութեանց մէջ գոյացած է փոխադարձ հասկացողութիւն մը, որուն համաձայն, պետութեան մը սահմաններուն

2010

ՆՊԱՏԱԿ

2. — Ամերիկայի Հայ կարմիր Սաչի նպատակն է, Ամերիկահայ կեանքին մէջ իրականացնելու աշխատիլ՝ Հ. Կ. Ս. —ի սկզբունքներն ու ծրագիրը, զանոնք յարմարցնելով Ամերիկեան միջավայրի առանձնապատուկ պայմաններուն:

3. — Հայ կարմիր Սաչի գործունէութեան ասպարէզն է .

Ա. — Պատերազմի, համաճարակներու եւ աղէտներու ժամանակ օգնել Հայ բանակներուն եւ Հայ ժողովուրդին, ամէն տեղ, դրամով, հագուստով, միջերօներով, բժշկական եւ առողջապահական այլ եւայլ միջոցներով:

Բ. — Օգնել վերատուր զինուորներուն, սպաննուածներու ընտանիքներուն, եւ սատարել անոնց գուակներու դատախարակութեան:

Գ. — Պատրաստել հիւանդապահներ, չրջուն դարմանատուներ, զեղազործներ, ինչպէս նաեւ հրատարակել առողջապահական գրքոյկներ եւ տարածել զանոնք:

49706-աի

մէջ, երկրի սեփական կարմիր հաշէն գառ, ցեղային հիմունքներու վրայ կազմուած՝ օտար ժողովուրդներու Կ. հաչի ընկերութեանց գոյութիւնը օրինական չի նկատուիր: Առ այս, կազմակերպուած է Daughters of Armenia Inc. Ընկերութիւնը որ իրքեւ խնամակալ կամ օժանդակ մարմին մը, կը ձգտի Հայ Կ. հաչի գործունէութիւնը հետապնդել, ո՛րք որ օրինական դժուարութիւններ կան անոր դէմ:



35823.66

Գ. — Երկրաշարժէ, սովէ, հեղեղներէ եւ համաճարակ հիւանդութիւններէ տառապող Հայերու եւ անոնց կարօտ ընտանեաց նպատներ տալ:

Ե. — Հիւանդութեանց բարձման աջակցիլ:

ՄԻՋՈՅՆԵՐ

4. — Հ. Կ. Սաչը իր նպատակին գործադրութեանը համար՝ հասոյթի հետեւեալ ազդիւրները պիտի ունենայ .

Ա. Մուտքի դրամ,

Բ. Անդամավճարներ,

Գ. Անհատական կտակներ եւ ամէն կարգի նուէրներ:

Դ. Հանգանակութիւններ, վիճակահանութիւններ, պազարներ, հանդէսներ եւ ներկայացումներ:

ԿԱՆՈՆԱԳԻՐ

ԱՆԳՍՄԱԿՑՈՒԹԻՒՆ

5. — Ամէն Հայ, առանց յարանուանական, սեռի եւ բնագրական դուանանքի խարութեան, կըրնայ անդամակցիլ Ամերիկայի Հայ կարմիր Սաչին Էթէ կ'ընդունի անոր ծրագիրն ու կ'ենթարկուի կանոնադրի տրամադրութիւններուն:

ԾԱՆՕԹ. — Անչափահաս անդամները, 16 տարեկանէն վար, բուէի իրաւունք չունին:

6. — Հ. Կ. Սաչի անդամներ կը բաժնուին եւրք կարգի, Ա. Գործօն, Բ. Պատուոյ, Գ. Օժանդակ անդամներ:

Ա. Գործօն անդամ կը նկատուին անոնք, որոնք ամէն տարի կանոնաւորապէս կը վճարեն առ նուա-

զըն երկու տոյար կամ եռամսեայ 50 սէնթ անդամատւրք:

Գործօն անդամներ, յարգելով կանոնադրի տրամադրութիւնները, կը վայելեն ընտրելու եւ ընտրուելու իրաւունք, տեղական պայմաններու համաձայն:

Բ. Պատուոյ անդամ կը համարուին անոնք՝ որոնք բարոյական եւ նիւթական մեծամեծ գոհողութիւններով կամ մասնակի մեծ գումարներով եւ արժէքաւոր իրեղէններով նպաստած են Հ. Կ. Սաչին:

Պատուոյ անդամի տիտղոս ունէ անձի կը արբուի Ամերիկայի Հայ Կ. Սաչի Պատգամ. Ժողովէն եւ կամ անկէ ընտրուած Կեզր. Վարչութեանէն:

Գ. Օժանդակ անդամ կը կոչուին անոնք՝ որոնք, ընկերութեանս նպատակին համար բարոյական աջակցութիւններ ընելէ զատ՝ յօժարակամ նրւէրներով կամ գէթ տարեկան մէկ տոյար վճարելով կը նպաստեն գործին:

ԾԱՆՕԹ.— Պատուոյ եւ Օժանդակ անդամներ անդամական ժողովներու եւ քուէի քէն չեն կրնար մասնակցիլ, բայց իրաւունք ունին ներկայ ըլլալու Հ. Կ. Սաչի այն ժողովներուն, ուր նիւթական, տնտեսական եւ բարոյական հաւուստութիւն կը կատարուի եւ որոնց մասին կանխաւ իրենց նամակաւ կամ ծանուցմամբ իմաց տրուած է:

ՄԱՄՆԱՃԻՒՂ

7.— Առնուազն 5 անդամներ կրնան կազմել Հ. Կ. Սաչի Մասնաճիւղ մը, որ կը վաւերացուի Կեզր. Վարչութեան կողմէ:

8.— Ամէն Մասնաճիւղ կ'ունենայ իր վարչութիւնը, երեք, հինգ կամ եօթն անդամներով, նախելով իր անդամներու թուին:

9.— Վարչութիւնը կ'ընտրուի անդամական ժողովին մէջ, ձայներու մեծամասնութեամբ, զաղանի քուէով եւ մէկ տարուան համար, պայմանաւ որ ժողովին ներկայ ըլլան անդամներու օրինական մեծամասնութիւնը եւ ընտրութեան մասին կանխաւ լուր տրուած ըլլայ բոլոր անդամներուն:

ԾԱՆՕԹ.— Վարչութեան անդամները վերընտրելի են:

10.— Նկատի ունենալով որ Հ. Կ. Սաչը աւելի կանայի կազմակերպութիւն մ'է, վարչական անդամներու երկու-երրորդը պէտք է բաղկանայ տիկիններէ եւ օրիորդներէ, եթէ մասնաճիւղը բաղկացած է մեծամասնաբար տիկիններէ եւ օրիորդներէ:

11.— Վարչութիւնը ինք կ'ընտրէ իր դիւանը՝ ատենապետ, ատենադպիր եւ գանձապահ, եւ կամ զատ զատ կ'ընտրուին անդամական ընտրական ժողովին մէջ: Վարչութիւնը հաւաքաբար պատասխանատու է Մասնաճիւղին գործունէութեան համար:

12.— Ընտրութեան արդիւնքը անմիջապէս կը տեղեկագրուի Կեզր. Վարչութեան:

13.— Մասնաճիւղերու վարչութիւնները պարտաւոր են ամէն վեց ամիս իրենց հաշուեկշիռը եւ գործունէութեան տեղեկագիրը զրկել Կեզր. Վարչութեան:

14.— Մասնաճիւղեր պէտք է որ անուղղակի-  
օրէն յարարերու թիւն պահեն Ամերիկեան Կարմիր  
Խաչի տեղական մարմիններուն հետ եւ օգտունն ա-  
նոնց ընձեռած օժանդակութիւններէն :

15.— Մասնաճիւղեր կարելոք ձեռնարկներու  
մասին նախօրօք տեղեկացնելու են Կեդր. Վարչու-  
թեան եւ ստանալու են անոր հաւանութիւնը :

16.— Մեծ ձեռնարկներու շուրջ մօտաւոր վայ-  
րերու Մասնաճիւղեր կրնան գործակցել :

17.— Ամէն թեկնածու իր տեղի Մասնաճիւղին  
մասնակցելու է : Երբ անդամ մը բանաւոր պատճառ  
ունի իր տեղի Մասնաճիւղին չպատկանելու, ուրիշ  
Մասնաճիւղի մը անդամակցելու համար պէտք է  
ստանայ իր տեղի Մասնաճիւղին, կամ՝ դժուարու-  
թեան պարագային, Կեդր. Վարչութեան հաւա-  
նութիւնը :

18.— Ամէն նոր անդամ Մասնաճիւղին մէջ ըն-  
դունուած պահուն կամաւոր մուտք մը կը վճարէ :

19.— Իրաւասու անդամ կը կոչուին անոնք,  
որոնք.

Ա. Ամբաստանութեան տակ չեն դանդախ :

Բ. Փողովներուն կանոնաւորապէս ներկայ  
դանուած են (բանաւոր պատճառները յարկելով) :

Գ. Տուրքերը ամբողջապէս վճարած են :

20.— Մասնաճիւղը պարտաւոր է անուագն  
ամիսը անդամ մը անդամական ժողով գումարել :  
Փողովը օրինական կը համարուի, երբ անդամնե-  
րուն տեղական սրտչած մեծամասնութիւնը ներ-  
կայ է :

21.— Մասնաճիւղի ժողովին կրնայ ներկայ  
դանուիլ ուրիշ Մասնաճիւղի պատկանող անդամ մը  
իրրեւ հիւր եթէ ժողովը կ'արտօնէ :

22.— Երբ Մասնաճիւղ մը կը մերժէ յանձնա-  
րարել իր անդամներէն մին ուրիշ Մասնաճիւղի մը,  
իր պատճառարանութիւնները պարտի ներկայացնել  
Կեդր. Վարչութեան, այդ մասին տեղեկացնելով  
նաեւ պատկան Մասնաճիւղին :

23.— Մասնաճիւղը իր յանձնարարականնե-  
րուն մէջ միշտ յիշատակելու է թէ յանձնարար-  
ուած անդամը իր պարտքերուն ո՞րքանը վճարած է  
եւ ո՞րքանը ապառիկ թողած :

24.— Մասնաճիւղը պարտաւոր է իր մէջէն  
հրաժարեալ կամ սեւէ պատճառով հեռացած ան-  
դամի անունը անմիջապէս հաղորդել Կեդր. Վար-  
չութեան :

25.— Մասնաճիւղը ջանալու է ըստ կարելոյն  
յաճախ գումարել համակրական եւ հրապարակային  
ժողովներ : Հրապարակային ժողովներուն համար,  
տեղական ուժերէ գուրս, ատենախօսները կը հը-  
րաւիրուին Կեդր. Վարչութեան միջոցաւ, եւ ճա-  
նապարհածախսը կը վճարուի Կեդրոնական գան-  
ձէն :

26.— Մասնաճիւղ մը հաւաքարար պատասխա-  
նատու է իր գանձին եւ գոյրին համար :

27.— Մասնաճիւղը պարտաւոր է իր գանձին  
մէջ հաւաքուած դրամները գրեկի երեք ամիսը ան-  
դամ մը Կեդր. Վարչութեան, պահելով միայն, առ  
ստուեին 20 աս հարիւրը իր տեղական ընթացիկ  
ծախսերուն համար :

28.— Պատգամաւորական ժողովի գումարու-  
մէն մէկ ամիս առաջ, Մասնաճիւղը պարտաւոր է  
վճարել իր բոլոր տուրքերը եւ հաշիւները մանրա-  
մասնօրէն ներկայացնել՝ Կեդր. Վարչութեան :

29.— Վարչութիւնը յարաբերութեան պաշտօնական կապն է իր մէկ անդամին եւ ուրիշ մարմիններու միջեւ :

**ՎԱՐՉՍԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԻՐԱԻՍՍՈՒԹԻՒՆԸ**

30.— Վարչական մարմինը կ'ստանայ եւ կը բանայ Մասնաճիւղին անունով եկած նամակները, կը ներկայացնէ վարչութեան յառաջիկայ ժողովին եւ կը վարէ Մասնաճիւղին ընթացիկ գործերը :

**ԾԱՆՈԹ.**— Մասնաճիւղին ուղղուած ամէն պաշտօնական գրութիւն անդամական ժողովի մէջ կը կարդացուի եւ ապա պահ կը դրուի Մասնաճիւղի ատենադպիրին ֆոլ :

31.— Ստիպողական պարտքաներու մէջ միայն երբ հնարաւոր չէ անդամական ժողով գումարել, վարչական մարմինը պէտք է անօրինութիւն մընէ եւ ներկայացնէ գայն Մասնաճիւղի յառաջիկայ ժողովին վաւերացնելու համար :

32.— Վարչական մարմնի անդամ, պատգամաւոր, դատաւոր եւ այլն, կրնան ըլլալ միայն այն անդամները, որոնք գէթ վեց ամիս գտնուած են անընդհատ Հ. Կ. Խաչի տեղական Մասնաճիւղին մէջ եւ իրաւասու են յօդուած 19-ի համաձայն :

**ԾԱՆՈԹ.**— Բացառութիւն կը կազմեն նորակազմ Մասնաճիւղերը :

33.— Կեդր. Վարչութեան անդամ մը, ինչպէս նաև Հ. Կ. Խաչի գործիչ մը թեկնածու նկատուելու չեն վարչական մարմնի անդամ եւ պատգամաւոր ընտրուելու :

34.— Եթէ վարչական մարմինը անհոգ, թոյլ եւ պարտագանց գտնուի եւ այդ պարագան հաս-

տատուի, Մասնաճիւղը կրնայ լուծել գայն մեծամասնութեամբ, պաշտօնավարութեան շրջանի լրացումէն առաջ եւ նոր մը ընտրել :

35.— ԱՏԵՆԱՊԵՏԻՆ պարտականութիւնն է Մասնաճիւղը ժողովի հրաւիրել, հսկել անոր կարգապահութեան եւ ատենադպիրն հետ ստորագրել պաշտօնական թուղթերը : Մասնաճիւղին կնիքը կը պահուի ատենապետին քով :

36.— ԱՏԵՆԱՂԻՐԸ կը կատարէ Մասնաճիւղին բոլոր գրաւոր գործերը, գանձայինէն գատ պատասխանատու է Մասնաճիւղի բոլոր թղթերու անվթար պահպանումին : Ատենադպիրը առնուազն ունենալու է երկու տոմարներ, առաջինին մէջ համառօտակի արձանագրելու համար Մասնաճիւղի ժողովներու ատենագրութիւնները, երկրորդին մէջ՝ Մասնաճիւղի անդամներուն անունները, ծրնրնդեան թուականը :

Այս վերջին տոմարին մէջ կ'արձանագրուին անդամներու մասին ծանօթութիւններ (մահ, տեղափոխում, հեռացում, եւ այլն, եւ այլն) :

37.— ԳԱՆՁԱՊԱՀԻՆ պարտականութիւնն է .  
Ա. Ստանալ եւ պահել Մասնաճիւղի անունով գրկուած կամ գանձուած բոլոր գումարները :

Բ. Կատարել Մասնաճիւղի որոշած ծախսերը :

Գ. Ունենալ տոմար մը, ուր մանրամասնօրէն նշանակելու է Մասնաճիւղի ելքը եւ մուտքը (հրապարակով կատարուած հանգանակութեան գումարները առանձին արձանագրելու է տոմարին մէջ) :

Դ. Ամէն երեք ամիս Մասնաճիւղին ելեւմտական հաշիւը ներկայացնել անդամական ժողովին :

Ե. Վարչութեան որոշումով ընթացիկ ծախսերու համար արտօնուած գումարը վար դնելով գան-

ձին մէջ մնացած դրամը զբեկել Կեզըր. Վարչութեան ամէն Լրեք ամիսը անգամ մը :

38.— Մասնաճիւղի թղթակցութիւնները կը կատարուին պատշտօնական թղթի վրայ, որ կը հայթայթուի Կեզըր. Վարչութեան կողմէ, և կ'ստորագրուին ատենապետին և ատենադպրին կողմէ :

Գանձային հաշիւները ստորագրելու է նաև գանձապետը :

ԵՄՆՕԹ.— Հասարակ թաղթի վրայ եւ կեղծ անուններով ստորագրուած գրութիւնները կը նրկատուին անվաւեր :

#### ԳՈՐԾԻՉՆԵՐ

39.— Գործիչներ կ'ընտրուին Հ. Կ. Խաչի Կեզըրնական Վարչութեան կողմէ :

#### ԿԵԳՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

40.— Հ. Կ. Խաչի Ամերիկայի Կեզըր. Վարչութիւնը կը ներկայացնէ Ամերիկայի Հ. Կ. Խ. Մասնաճիւղերու Գործադիր Իշխանութիւնը :

Ան է Ամերիկայի Հ. Կ. Խ. պաշտօնական ներկայացուցիչը թէ՛ Երկրի և թէ՛ արտասահմանի Հ. Կ. Խ. մարմիններուն, ինչպէս նաև Հայ և օտար կազմակերպութիւններու առջև : Անոր միջոցաւ միայն կրնան կատարուիլ Մասնաճիւղերու բոլոր պաշտօնական յարաբերութիւնները վերը յիշուած մարմիններուն հետ :

41.— Կեզըր. Վարչութեան պարտականութիւններն են .

Ա. Գործադրել Հ. Կ. Խ. Ամերիկայի պատգամաւորական ժողովի որոշումները :

Բ. Նոր Մասնաճիւղեր կազմակերպելու հետամուտ ըլլալ :

Գ. Մղում տալ Մասնաճիւղերու գործունէութեան և քննել անոնց հաշիւները :

Դ. Հրապարակային ժողովներու համար ատենախօսներ պատրաստել :

Ե. Հետամուտ ըլլալ, որ Մասնաճիւղերու մէջ ծագած սեւէ խնդիր օրինական ճամբով լուծում գտնէ :

Զ. Շրջաբերականով հազորդել Մասնաճիւղերու՝ կազմակերպութեան գործունէութեան վայրերէն ստացուած լուրեր :

Է. Մասնաճիւղերէն պահանջել վեցամսեայ հաշուեկշիռ և տեղեկագիր, պատրաստուած մասնաւոր հարցարաններու միջոցով :

Ը. Կենդանի կապ պահել Հայաստանի Կարմիր Խաչի Գլխաւոր Վարչութեան հետ և անկէ ստանալ ցուցմունքներ և թելադրանքներ :

42.— Կեզըր. Վարչութիւնը կազմակերպական սեւէ կարեւոր խնդրի առթիւ, խորհրդակցութեան կրնայ հրաւիրել կարող ընկերներ և ընկերուհիներ, երբ հարցի մը մասին Կեզըր. Վարչութիւնը չի կրնար երկու-երրորդով որոշում տալ և փոքրամասնութիւնը կը պահանջէ խորհրդակցական ժողով :

43.— Կեզըր. Վարչութիւնը կը բաղկանայ եօթը անդամներէ, որոնք կ'ընտրուին Պատգամ. ժողովին կողմէ, մէկ տարուան պաշտօնավարութեան շրջանով և վերընտրելի են :

44.— Կեդր. Վարչութեան ընտրելի կրնան ըլլալ միայն այն անդամները, որոնք ընտրութեան օրէնն առնուազն մէկ տարի շարունակ գտնուած են Կարմիր Խաչի մէջ եւ իրաւասու են:

45.— Կեդր. Վարչութեան ընտրելի չեն կրնար ըլլալ.

Ա. Կազմակերպական դատական ամբաստանութեան տակ գտնուող անդամները.

Բ. Հրաժարեցուած եւ վերստին ընդունուած անդամ մը, եթէ միայն ձեռնհաս ատեանի մը կողմէ իսպառ անպարտ յայտարարուած չըլլայ:

46.— Եթէ Կեդր. Վարչութեան մէկ կամ աւելի անդամները պակսին, Պատգմ. Ժողովին ցանկէն յաջորդական առաւելագոյն քուէ ստացողներ կը հրաւիրուին մասնակցելու կազմին. բացառիկ պայմաններու մէջ միայն, Կեդր. Վարչութիւնը Մասնաճիւղերուն կը զրկէ եռանուն ցանկ մը, պակասած անդամի ընտրութեան համար:

47.— Եթէ Կեդր. Վարչութեան անդամներու թիւին կէսէն աւելին պակսի, արտակարգ Պատգ. Ժողով կը զուժարուի նոր ընտրութիւն կատարելու համար:

48.— Կեդր. Վարչութիւնը ինք կ'ընտրէ իր զիւանք, որ կը բաղկանայ ատենապետէ, ատենադպրէ եւ դանձապահէ, որոնք անդամուհիներ լինելու են:

#### ԱՏԵՆԱՊԵՏՈՒ ՀԻ

49.— Ատենապետին պարտականութիւնները.

Ա. Ատենապետել Կեդր. Վարչութեան ժողովներուն.

Բ. Ատենադպրին հետ խորհրդակցելով հոգածու ըլլալ, որ Կեդր. Վարչութեան որոշումները անթերի եւ անյապաղ գործադրուին:

Գ. Ատենադպրին հետ բանալ եւ կարգալ Կեդր. Վարչութեան նամակները:

Դ. Պահել Կեդր. Վարչութեան Հայերէն եւ Անգլիերէն կնիքները եւ ստորագրել ու կնքել ատենադպրին հետ եւ ի հարկին դանձապահին հետ պաշտօնական բոլոր թուղթերուն տակ:

#### ԱՏԵՆԱԴՊՐՈՒ ՀԻ

50.— Ատենադպրին պարտականութիւններն են.

Ա. Կեդր. Վարչութեան ժողովներուն համառօտ ատենագրութիւնը արձանագրել յատուկ տոմարի մը մէջ, ստորագրել բոլոր պաշտօնական գրութիւններն Ատենապետին հետ:

Բ. Կեդր. Վարչութեան եկած բոլոր գրութիւնները բանալ եւ հաղորդել միւս անդամակիցներուն անոնց կարծիքները խնդրելով:

Գ. Խնամով պահել Կեդր. Վարչութեան անունով իրեն յանձնուած բոլոր գրութիւնները Պատգ. Ժողովին ներկայացնելու համար:

Դ. Գանձապահին ընկալադրերը եւ անոր հասած գրամական գումարները արձանագրել մասնաւոր տոմարի մը մէջ:

Ե. Պատրաստել Պատգ. Ժողովին ներկայացուելիք տարեկան մանրամասն տեղեկագիրը:

Զ. Կազմել եւ պահել Կեդր. Վարչութեան բոլոր զոյքերու ցուցակը:

**ՔԱՐՏՈՒՂԱՐ**

Քարտուղարի պարտականութիւններն են .

Ա. Գանձային խնդիրներէն զատ՝ չըջարերական, նամակ եւայլն պատրաստել Կեդր. Վարչ. հսկողութեան տակ :

Բ. Ամերիկայի Հայ Կ. Խաչի Մասնաճիւղերուն մանրամասն անդամական ցանկը ունենալ, լրացնելով Մասնաճիւղերէ ստացուած տեղեկագրերուն վրայ, եւ նշանակել հոն մահերը, հրաժարումները, տեղափոխումները, դադրեցումները եւ արտաբոսումները :

**ԳԱՆՁԱՊԵՏՈՒ ՀԻ**

51. — Գանձապահին պարտականութիւններն են .

Ա. Քարտուղարութենէն ստանալ Կեդր. Վարչութեան անունով եկած բոլոր գումարները եւ ընկալագրերը զրկել Քարտուղարութեան միջոցով :

Բ. Դրամ յանձնել, զրկել եւ ծախքեր ընել Կեդրոնական Վարչութեան գրաւոր որոշումով վաւերացուած ատենագետի եւ ատենադպրի ստորագրութիւններով .

Գ. Տոմարի մը մէջ կանոնաւորապէս եւ մանրամասնօրէն արձանագրել Կեդր. Վարչութեան ելեւմուտքը .

Դ. Իր կատարած վճարումներուն եւ ծախքերուն ընկալագրերն ու արդարացուցիչ վաւերաթուղթերը պահել իր քով :

Ե. Կեդր. Վարչութեան պարբերաբար ներկայացնել իր արկղին հաշիւը :

52. — Կեդր. Վարչութիւնը հաւաքաբար պատասխանատու է գանձապահին յանձնուած բոլոր

գումարներուն համար եւ հետեւաբար ազատ է գանձին ապահովութեան համար ընել իր անհրաժեշտ սեպած կարգադրութիւնները :

ԾԱՆՕԹ. — Ապահովութեան լաւագոյն միջոցն է գանձապետը եւ քարտուղարը դնել երաշխաւորութեան տակ, կամ Կեդր. Վարչութենէն որոշուած երկու անձերու ստորագրութեամբ միայն կարելի լինի ֆուէարկուած ռեւէ գումար հանել դրամատուցէն :

53. — Կեդր. Վարչութիւնը պարտաւոր է իր բոլոր հաշիւները, ինչպէս նաև բոլոր գրութիւնները, Պատգ. Ժողովին օրը բերել զննել պատկան յանձնախումբերու տրամադրութեան տակ :

54. — Կեդր. Վարչութիւնը պարտաւոր է Պատգամաւորական Ժողովի գումարումէն երկու ամիս առաջ,

Ա. Հազարդել բոլոր Մասնաճիւղերուն Պատգ. Ժողովի գումարման օրն ու զլիսաւոր օրակարգը :

Բ. Պահանջել Մասնաճիւղերէն տարեկան հաշուկշիւնները եւ տեղեկագիրները :

Գ. Պահանջել, որ տուրքերու հաշուէն ապառիկ ունեցող Մասնաճիւղերը փութան իրենց հաշիւները փակել եւ զրամբ հասցնել Կեդր. Վարչութեան :

**ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ԴԷՄ ՅԱՆՅԱՆՔՆԵՐ**

55. — Կազմակերպութեան ղէմ յանցաւոր կը նկատուի այն անդամը, որ .

Ա. Կ. Խաչի կարգապահութեան ղէմ անաստող ընթացք մը կը բռնէ,

Բ. Մասնաճիւղի մը ներքին գործերու մասին ուրիշներու կը խօսի .

Գ. Գուհիկ կամ անպատշաճ լեզու մը կը գործածէ ժողովներու մէջ:

Դ. Դիտամբ կը խանգարէ ժողովը կամ անպատշաճ վարմունք մը կ'ունենայ հոն:

Ե. Կեդր. Վարչութեան կամ Պատգ. ժողովի տեղեկութիւններն ու որոշումները, որոնք այդ մարմիններուն մէջ մնալ սահմանուած են, կը հաղորդէ այդ մարմիններէն դուրս գտնուող անդամներու:

Զ. Գիտակցարար երեսի վրայ կը ձգէ կամ կը մերժէ կատարել իրեն յանձնուած պաշտօն մը:

Է. Կազմակերպութեան անունը չարաչար կը գործածէ դրամական շահու համար:

Ը. Զ. Կ. Խաչի պատկանող սեւէ գումար կամ ինչք կ'իւրացնէ եւ կամ չարաչար կը գործածէ:

56.— Երբ Մասնաճիւղ մը Կ. Խաչի մասապար ընթացքի մը մէջ կը գտնուի, դատի կ'ենթարկուի Կեդր. Վարչութեան կողմէ, որ իրաւունք ունի այդ Մասնաճիւղը կախակայել մինչեւ Պատգ. ժողովի օրը:

57.— Պատգ. ժողովի որոշումով Մասնաճիւղ մը կրնայ լուծուած հռչակուիլ, եթէ հակառակ կը գործէ Զ. Կ. Խաչի կանոնադրին կամ ծրագրին, եթէ մինչեւ տարի մը անընդհատ անդամական ժողով չունենար կամ չի վճարեր իր տուրքերը:

58.— Երբ Կեդր. Վարչութեան անդամներէն մէկը զեղծում կը գործէ, ընկերական ատեանի կը հրաւիրուի, որ կը կազմեն Կեդր. Վարչութեան բոլոր միւս անդամները, եւ մերձաւոր Մասնաճիւղերու մէկ մէկ ներկայացուցիչները, հաւասար ձայնով: Ատեանը լիազօր է պաշտօնանկ ընելու ամբաստանուածը:

59.— Երբ Կեդր. Վարչութիւնը պարտագանց կամ ապօրինի ընթացքի մը մէջ կը գտնուի, ամէն Մասնաճիւղ անկէ բացառութիւն կրնայ պահանջել:

ԲՈՂՈՔ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԵՒ ՆԿԱՏԻ ԱՌՆԵԼՈՒ ԵՂԱՆԱԿԸ

60.— Ամէն բողոք՝ սեւէ անդամի, անդամներու եւ կամ մարմնի դէմ՝ գրաւոր կերպով կը ներկայացուի պատկան մարմնի օրինաւոր ժողովին: Ներկայացուած բողոքը ներկաներու կէսէն մէկ ատելի քուէով նկատի կ'առնուի:

61.— Պատիժները երեք կարգի են.

Ա. Յանդիմանութիւն.

Բ. Քուէէ զրկում.

Գ. Հրաժարեցում:

62.— Թեթեւ յանցանքներու համար ատենապետը ժողովի ընդհանուր կարծիքը առնելէ յետոյ՝ համապատասխան որոշում կը պահանջէ: Ծանր յանցանքներու համար ժողովի ընդհանուր կարծիքը լսելէ վերջ՝ ատենապետը կը պահանջէ որ, բաց քուէով ընտրուի 3-5 անդամ ունեցող դատական յանձնախումբ մը. (Դատական յանձնախումբի անդամները պէտք է ազատ ըլլան դատին հետ սեւէ կապ ունենալէ):

63.— Դատական յանձնախումբին յանձնուած դատը կը քննուի մասնաճիւղի ժողովէն դուրս եւ արդիւնքը գրաւոր կերպով կը ներկայացուի յաջորդ ժողովին:

64.— Ծահազրգոտող կողմերը ներկայ կ'ըլլան քննութեան՝ իրենց տեսակէտները պարզելու:

35823-66



և, ի պահանջել հարկին, յանձնախումբին տալու հարկ եղած փաստերն ու տեղեկութիւնները: Յանձնախումբը երկու կողմերը, ինչպէս նաև վրկաները, լսելէ յետոյ, առանձինն կուտայ իր վճիռը:

65.— Դատական յանձնախումբի վճիռները կ'անցնին մեծամասնութեան քուէով և կը վաւարացուին կամ կը մերժուին Մասնաճիւղին կողմէն:

66.— Եթէ ամբաստանեալը կամ բողոքարկուն բացակայի (բանաւոր բացակայութիւնը գրաւոր կերպով և ժամանակին հասցնելու է պատկան մարմինին) դատական յանձնախումբը կը շարունակէ դատավարութիւնը և կ'արձակէ իր վճիռը:

67.— Ուեէ անդամ որ դատ. յանձնախումբին կողմէն կը հրաւիրուի վկայութիւն կամ տեղեկութիւն տալու, պարտաւոր է ներկայանալ ատեանին և գոհացում տալ եղած հարցապնդումին, հակառակ պարագային յանցաւոր կը նկատուի:

68.— Պատիժը (յանդիմանութիւն, քուէ զըրկում և արտաքսում) գրաւոր կը պատրաստուի և Մասնաճիւղի ժողովին մէջ դատապարտուած անդամին ներկայութեան կը կարդացուի. եթէ անդամը խոյս տայ, որոշուած օրը ներկայանալէ և պատիժը լսելէ, կը զրկուի Կ. Խաչի անդամական իրաւունքէն:

### ԲՈՂՈՔ ԴԱՏԱՎՃԻՌԻՆ ԴԷՄ

69.— Մասնաճիւղի մը դատավճիռին դէմ եղած բողոքը կ'ուղղուի Կեդր. Վարչութեան: Բոլոր բողոքները պէտք է ներկայացնել դատավճիռը հարկելու օրէն առ առաւելն ամիս մը ետքը:

70.— Բողոքարկուն իր բողոքագիրը կ'ուղղէ Մասնաճիւղին, որ այդ գրութիւնը դատին վերաբերեալ բոլոր թուղթերուն հետ կը զրկէ Կեդր. Վարչութեան: Մասնաճիւղը պատասխանատուութեան կ'ենթարկուի եթէ բողոքը ստանալէ ետք մինչև եօթ օր բոլոր վերոյիշեալ գրութիւնները չի յանձնէ պատկան մարմինին: Մասնաճիւղին վրճիռը պարտաւորիչ է մինչև չըրկանուի Կեդր. Վարչութեանէն:

71.— Եթէ ուեէ Մասնաճիւղ ուզէ բողոքել Կեդր. Վարչութեան վճիռին դէմ, պէտք է զիմէ Պատգ. ժողովին:

72.— Պատգ. ժողովի դատական յանձնախումբին առջև կը հրաւիրուին երկու կողմերը այն ատեն միայն, եթէ բողոքագիրը պատճառարանուած ըլլայ, թէ դատավարութեան մէջ անկախութիւն, քերութիւն կամ աչառութիւն տեղի ունեցած է: Յանձնախումբին առջև նոր դատ տեղի չկրնար ունենալ, այլ կրնայ խօսուիլ ու վիճուիլ միմիայն բողոքին վերոյիշեալ կէտերը ապացուցանելու համար եւ ուրիշ ոչինչ:

73.— Դատ. Յանձնախումբը իր եզրակացութիւնները կ'ենթարկէ պատգ. ժողովի վաւերացումին և կը յանձնարարէ հարկաւոր դատածը: Պատգամաւորական ժողովի որոշումը պաշտօնապէս կը հարողորի Կեդր. Վարչութեան կողմէ պատկան Մասնաճիւղին ի գործադրութիւն:

### ՎԵՐԱՀԱՍՏԱՏՈՒՄ

74.— Ուեէ անդամ, որ Մասնաճիւղէ մը հետոցուած է ոչ-բանաւոր պատճառներով կամ իր

տուրքերը չի վճարելու համար, կրնայ նորէն ընդունուիլ, կանխիկ վճարելով իր բոլոր պարտքը, ապա թէ ոչ կը նկատուի նոր անգամ:

75.— Դատավճիռէ մը խուսափելու համար հրաժարած անդամները չեն կրնար վերստին ընդունուիլ մինչև չենթարկուին իրենց մասին տըրուած վճիռին:

76.— Մասնաճիւղը կրնայ, երբ՝ նոր վկայութեան մը, կամ մեղմացուցիչ պարտադայի մը հանդէպ գտնուի, կամ ժամանակ անցնելէ ետք դադրեցումի տեսչութիւնը չափազանց համարէ, քուէներու երկու երրորդի առաւելութեամբ՝ վերջ տալ դադրեցումին եւ դատապարտուած անդամը ներսընդունիլ՝ լուր տալով Կեդր. Վարչութեան:

#### ՊԱՏԳԱՄԱՆՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎ

77.— Ամերիկայի Հ. Կ. Խաչի Պատգ. Ժողովը Հայ Կարմիր Խաչի օրէնսդրական, վարչական, գատական եւ ներկայացուցչական գերագոյն մարմինն է Ամերիկայի մէջ եւ կը գումարուի պարբերաբար տարին անգամ մը:

78.— Արտակարգ Պատգ. Ժողով կը գումարուի:

Ա. Երբ Կեդր. Վարչութիւնը արտակարգ եւ ստիպողական դարձի մը համար բոլոր Մասնաճիւղերու խորհրդակցութիւնը եւ հաւաքական տնօրինութիւնը անհրաժեշտ կը գտնէ:

Բ. Երբ Մասնաճիւղերու կէսէն աւելուած մէկ աւելի հարկ կը տեսնեն:

Գ. Երբ Կեդր. Վարչութիւնը կը կազմալուծուի:

ԾԱՆՈԹ.— Կեդր. Վարչութեան առ նուազն չորս անդամները կը պատրաստեն պատգ. Ժողովի հրաւերը:

#### ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԳ. ԺՈՂՈՎ

79.— Պատգ. Ժողովը կ'ընտրէ պատգամաւորներ Հայ Կ. Խաչի Ընդհանուր Պատգամաւորական Ժողովին մասնակցելու՝ յանուն Ամերիկայի Հայ Կարմիր Խաչին, եթէ այդպիսի պէտքի մը առջև գտնուի:

80.— Պատգ. Ժողովը կ'ունենայ այլեւայլ յանձնախումբեր ըստ հարկին — Դատական, Հաշուեքննիչ, Օրակարգի, Վերաքննիչ — որոնց գործելու եղանակը ճշդուած է Պատգ. Ժողովի ներքին կանոնադրութեամբ:

81.— Պատգ. Ժողովը կ'ստանայ Կեդր. Վարչութեան համարատուութիւնը, եւ հնարաւոր տնօրինութիւնները կ'ընէ պարտազանց մարմիններու եւ պատասխանատու անդամներու նկատմամբ:

82.— Պատգ. Ժողովը կ'ընտրէ Կեդր. Վարչութիւնը, եռադասիկ ցանկի մը վրայէն, գաղտնի քուէարկութեամբ եւ քուէներու մեծամասնութեամբ:

Քուէարկութենէն առաջ իւրաքանչիւր ընտրելիի մասին խորհրդակցութիւն կը կատարուի եւ կարծիքներ կը յայտնուին ընտրելիին բացակայութեանը:

83.— Պատգ. Ժողովին որոշումները պարտաւորիչ են բոլոր Մասնաճիւղերուն համար:

84.— Պատգ. Ժողովին դէմ իւրաքանչիւր բողոք յաջորդ Պատգ. Ժողովին միայն կրնայ ներկայացուիլ:

85.— Ամէն Մասնաճիւղ կը մասնակցի պատգ. ժողովին իր իրաւասու անդամներու թիւին համեմատութեամբ: Օրինական թուի վրայ իւրաքանչիւր 50 անդամի համար մէկ ձայնի յաւելում կ'ունենայ Մասնաճիւղը: Այսպէս, 5 անդամ ունեցող Մասնաճիւղը՝ մէկ ձայն, 51-100 անդամ ունեցողը՝ 2 ձայն, 101-150 անդամ ունեցողը՝ 3 ձայն, և այլն:

86.— Իրաւասու են այն Մասնաճիւղերը, որոնք վճարած են իրենց կադմակերպական տուրքին երեք չորրորդը և մէկ չորրորդին համար ալ մանրամասն տեղեկութիւններ կուտան կեդր. Վարչութեան՝ պատգ. ժողովի գումարումէն մէկ ամիս առաջ:

87.— Հետուոր այն Մասնաճիւղերը, որ 51 կամ աւելի անդամներ ունին և այս կանոնադրի տրամադրութիւններուն գոհացում կուտան, իրաւունք ունին զրկելու իրենց թիւին համաձայն պատգամաւորներ, պայմանաւ որ ծախսը 50 տոյարէն աւելի չըլլայ, հակառակ պարագային տեղին վրայ կ'ընեն բացառիկ կարգադրութիւն:

88.— Հետուոր Մասնաճիւղերը կրնան պատգ. ժողովին ներկայացուցիչ նշանակել տարբեր վայրերէ, և թէ՛ ոեւէ պատճառով իրենք չեն զրկեր պատգամաւոր:

ՅԱՆՕԹ.— Եթէ նշանակուած պատգամաւորը ուրիշ տեղէ մը արդէն բնութուած է, ոեւէ կերպով չի կրնար բնութելի ըլլալ, և պատգ. ժողովը իրաւունք ունի այդ ձայնը ուրիշի մը տալու:

89.— Պատգ. ժողովին չեն կրնար մասնակցիլ այն Մասնաճիւղերը, որոնք իրենց տարեկան տուրքը կանխաւ չեն վճարած:

90.— Այն նորակազմ Մասնաճիւղերը, որոնց վաւերացումը պատգ. ժողովի գումարման օրէն դէթ երեք ամիս առաջ տեղի ունեցած չէ, չեն կըրնար մասնակցիլ պատգ. ժողովին:

91.— Պատգամաւոր կրնան ընտրուիլ միայն այն անդամները, որոնք առնուազն վեց ամիս իրաւասու անդամ եղած են և առնուազն երեք ամիս գտնուած են նոյն Մասնաճիւղին մէջ:

92.— Իւրաքանչիւր պատգամաւոր միայն մէկ քուէ կրնայ ունենալ և մէկ Մասնաճիւղ ներկայացընել: Բայց հետուոր Մասնաճիւղերը, և թէ՛ ծախքերը նկատի ունենալով չկրնան իրենց թուի համեմատութեամբ ներկայացուցիչ զրկել, կրնան իրենց ձայնը տալ ուրիշի մը ուղղակի կամ Պատգ. ժողովի միջոցաւ:

93.— Կեդր. Վարչութեան անդամ, ինչպէս նաև պատասխանատու անդամներ պատգամաւոր չեն կրնար ընտրուիլ:

94.— Կեդր. Վարչութիւնը հաւաքաբար երկու քուէով կրնայ մասնակցիլ Պատգ. ժողովին. այդ իրաւունքը յանձնելով իր անդամներէն երկուքին:

Կեդր. Վարչութեան միւս անդամները ներկայ կը գտնուին պատգ. ժողովին միայն խորհրդակցական ձայնի իրաւունքով:

95.— Պատգամաւորներու մեծամասնութեան ներկայութիւնը օրինական կը սեպուի պատգ. ժողովը բացուած յայտարարելու:

96.— Պատգ. ժողովը միայն կրնայ փոփոխութիւններ ընել այս կանոնադրին մէջ:

Այն կանոնադրի ոեւէ յօդուածը փոփոխելու կամ ջնջելու մասին ամէն առաջարկ, ինչպէս նաև անուղղակի կերպով նոյն նպատակին ձգտող ա-

1874

մէն նոր առաջարկ, պատճառարանութիւններով  
մէկտեղ կը ներկայացուի Կեդրոնական Վարչու-  
թեան ամենէն ուշ՝ Պատգ. Ժողովէն երեք ամիս ա-  
ռաջ, որպէս զի Կեդր. Վարչութիւնը պատգ. Ժողո-  
վին ներկայացուելիք հարցերուն ցանկին մէջ գնե-  
լով զանոնք, ներկայացնէ Մասնաճիւղերու քննու-  
թեան:

Առանց այս ձեւականութեան, ուղղակի պատգ.  
Ժողովին բերուած կամ հոն յարուցուած այդպիսի  
առաջարկներ նկատի չեն առնուիր, այլ կը յանձ-  
նուին նորքնուիր Կեդր. Վարչութեան, որ յաջորդ  
Պատգ. Ժողովին ենթարկէ պատշաճ եղանակով:

**ԿԱԶՄԱԼՈՒԾՈՒՄ**

97.— Ամերիկայի Հայ Կ. Խաչը լուծուած կը  
համարուի երբ իր Մասնաճիւղերու թիւը երեքէն  
պակաս է, կամ ընդհանուր գործօն անդամներու թի-  
ւը երեսունի չի հասնիր:

Լուծման պարագային ընկերութեանս պատկա-  
նած դրամ, գոյք եւ ամէն ինչ կը զրկուի Հայաստա-  
նի Պետական Կարմիր Խաչի Գլխաւոր Վարչութեան,  
այսպիսի մարմնի մը շղոյսութեան պարագային, Հայ  
ազգը ներկայացնող բաղաբաղական կամ կրօնական վե-  
րին իշխանութեան:

Վ Ե Ր Ջ



2013



104

W.D.

0

1

2

3

Three